

բան, Թաղւոր, Եղուարդ, Արամ Գարակէօզեանց: Կարապետ Գարակէօզեան՝ ուսեալ և հանճարեղ անճաւորութիւն, կըրցաւ նաեւ բերուիլ բարի և կտակող տրամադրութիւններով կրթական ու հանրային ալ գործերու հանդէպ, և մենք մեր խոր մանկութեան ունկնդրած ենք Սկիւտար Եէնիմահալլէի փառաւոր տաճարին մէջ՝ ճեմարանական հանդէսի մը՝ իր մէկ ազնիւ բանախօսութեանն ընտրեալ բազմութեան մը առջեւ, Յովհաննէս Տէրոյենց ծերունիին ակադեմական յորդորներէն անմիջապէս ետքը:

Գարակէօզեանց և ուրիշ քանի մը հին տուներու պատմայի գործէն տակաւ նուազիչն և Կ. Պոլիսի Բիացայի միայ այս ճիւղին առած կարեւորութիւնները՝ պատճառներ մը աւելի եղան քանի մը պատմայի նոր գործերու հաստատութեան և յառաջդիմութեան, ի մէջ այլոց Յարութիւն Գընաճեան, Կիւմիւշկէրտան և Յովհաննէս Խոնչէկիւլ, Րաքտիւան (այս յոյն տան գլխաւոր վարիչներն էին Գարակէօզեանց քով մարզուած երկու հայ երիտասարդներ՝ Յովսէփ Սրովեան և Զենոբ Հիսարլեան), Թոքատեան պատմայի ճիւղ, Յնտըքլեան և Տիգրան Ղոնչէկիւլեան, Մանուկեան եղբօրորդիք, Գրիգորիսեան, Մելիքեան, Մնտիկեան, Կիլքրիսդ և Կ. Թիրեաքեան, Մկրտիչ Քափամաճեան, Կարապետ Պատմաճեան և այլք, որոնց վրայ պիտի խօսինք ետքը:

